առ Բդեշխն Աքքէի. գրեաց և առ աղնուաբարոյ Յովհաննէս աղայն 'ի Դամասկոս առնուլ գիր 'ի Բդեշխէն. զայս ամենայն գրեանս և զհրովարտակս յանձն արար Զաքարիա հաւատարմին իւրոյ Կարապետին, և ընդ վստահելի սուրհանդակին եհան 'ի ճանապարհ հասանիլ 'ի Դամասկոս, զի պատրաստ գտցին անդ նախ քան զվերադարձ Կուսակալին յուխտադնացութենէ։ Եհան 'ի նաև նաև զՊանտամեան Մարգար աղայն՝ լինիլ օգնական գործոց Աթոռոյն և զսպել զանիրաւութիւնս Դատաւորին զօրաւոր բանիւք՝ զի ոսկերիչ նորա էր՝ յանձն արարեալ նմա 21,000 դահեկան վասն պարտուց Աթոռոյն։ Գրեաց և առ Պօղոս Եպիսկոպոս՝ զի զայլ բաժինս յառաջակայ պարտուց տնօրինել 'ի մնացեալ զարդուց եկեղեցւոյ, և զՀայոցն թողուլ յետս, եւ խնամով առաքել փոլիցայ՝ զի մի նեղեսցեն, մինչեւ բացցին դրունք ողորմութեանն Աստուծոյ, և ապա խնդրեաց առաքել առ ինքն զհին վաւերական գրեանս Գողգոթայի լռելեայն։ Եւ 'ի սմին ժամանակի 'ի Կոստանդինուպօլիս 'ի գլխաւորաց Ազգին բաց 'ի Միքայէլ Ամիրայէ ոչ ոք իշխէր մերձենալ առ Զաքարիա վարդապետ, զի յերկիւղէ և 'ի սպառնալեաց Տեառն նորա սարսէին ամենեքեան, և նա էր որ յորդորէր զնա միշտ 'ի բարին։ Եւ զի կարի սաստկացեալ էր գայթակղութիւն Հրէից, և բազումք մըկըրտեցան, եւ շատք եւս ընտանեօք ցանկային 'ի նոյն. բայց յերկիւղէ առնն ոչ ոք համարձակէր մկրտիլ, զի ըստիպմամբ նորին գրիաց Կարապետ Պատրիարք, և աքսորեցան Տ. Պաղտասար 'ի Պալատու, Տ. Զաքարիա 'ի Ղալաթիոյ, եւ ոմանք յաշխարհականաց 'ի պատճառս Հրէից հաւատացելոց։

Պօղոս Եպիսկոպոս որ 'ի վեր քան զմարդկային միտս համարէր զայս գործ, գրեաց 'ի Դամասկոս առ Յովհաննէս Աղայն և առ առաջնորդ տեղւոյն, ուր էր և Եղիա Եպիսկոպոս. զի 'ի հասանիլ Կարապետին անդ՝ խնամով զգուշացեալ առցեն գիր 'ի Կուսակալէն։ Սակայն Կարապետն հասեալ 'ի մէջ Համս և Համս քաղաքաց՝ հարեալ 'ի խորշակէ մեռաւ, եւ գրեանքն ամբողջ հասին 'ի Դամասկոս առ Յովհաննէս Աղայն։ Նախ քան զժամանել հրովարտակաց յԵրուսաղէմ, բազմացաւ չչունչ հակառակորդաց, զի թէ-